ԻՆՈՎԱՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Ֆլորա Վարդանի Սողոյան
ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի ասպիրանտ

Ճգնաժամային երևույթները, որպես կանոն՝ ունենում են էական բացասական ազդեցություն համաշխարհային տնտեսության բնականոն զարգացման վրա՝ հանգեցնելով ֆինանսական սպառնալիքների ուժգնացման և մակրոտնտեսական ցուցանիշների վատթարացման: Այն, սովորաբար, ուղեկցվում է գործազրկության մակարդակի բարձրացմամբ, արտադրական հզորությունների անկմամբ, առևտրի ծավալների կրճատմամբ և տնտեսական զարգացման տեսանկյունից այլ ոչ ցանկալի երևույթների դրսևորմամբ: Համաշխարհային տնտեսական վերջին ճգնաժամին հաջորդող ժամանակաշրջանը ցույց տվեց, որ ՀՀ տնտեսությունը բավականին զգայուն է արտաքին ցնցումների նկատմամբ, որը հիմնականում պայմանավորված էր տնտեսության ոչ արտահանելի հատվածի (ենթակառուցվածքներ, շինարարություն) զարգացման խաթարմամբ, արտահանման կառուցվածքի հումքային գերակայությամբ և մասնավոր տրանսֆերտներից մեծ կախվածությամբ: Արդյունքում, ծանր հարված հասցվեց ՀՀ տնտեսությանը՝ ուղեկցվելով օտարերկրյա ուղղակի ներդրումների կրճատմամբ, արտերկրից դրամական փոխանցումների նվազեցմամբ և հարկային եկամուտների կրճատմամբ: Հանրապետությունում համախառն ներքին արդյունքի նախաճգնաժամային մակարդակը վերականգնելու համար պահանջվեց գրեթե տասը տարի, ինչն, ըստ էության, վկայում է ազգային տնտեսության՝ արտաքին փոփոխությունների նկատմամբ խոցելիության, ինչպես նաև դրա հաղթահարման ոչ բավարար կարողության մասին: Այս հանգամանքը ընդգծում է երկրի տնտեսական զարգացման նոր՝ առավել արդյունավետ մոդելի ներդրման հրամայականը:

Ժամանակակից հարաբերությունների պայմաններում, երբ սոցիալ-տնտեսական համակարգերի զարգացումը պահանջում է ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործում, մրցակցային առավելությունների հետևողական կիրառում, տնտեսական կայուն ու բարձր աճի ապահովում և արտադրողականության մակարդակի կտրուկ բարձրացում, տնտեսական զարգացման հիմնական ուղին կարող է պայմանավորված լինել բացառապես ինովացիոն արդյունավետ քաղաքականությամբ: Միջազգային տնտեսական կապերի ամրապնդման և բարձր տեխնոլոգիաների ներդրման նպատակով ինովացիոն քաղաքականության իրականացումը կստեղծի լայն հնարավորություններ տնտեսվարող սուբյեկտների գործունեության պայմանները բարելավելու և դրանց գործունեության արդյունավետությունը

բարձրացնելու համար: Ակնհայտ է, որ նման մոտեցումը կդառնա ազգային տնտեսության մրցունակության բարձրացման հիմնական նախապայման և տնտեսական աճի առանցքային աղբյուր:

Միջազգային շուկաներ դուրս գալու որոշակի սահմանափակումներով հանդերձ, Հայաստանն այդ ուղղությամբ կարող է ունենալ հաջողություն միայն նորարարական տեխնոլոգիաների ներդրման և տնտեսության կառուցվածքի արդիականացման արդյունքում: Հիմնականում նման պայմաններում է, որ տնտեսավարող սուբյեկտներն ունենում են լայն հնարավորություններ արտադրական ծախսերի կրճատման, արտադրողականության աճի ապահովման, մրցակցային առավելությունների նպատակամետ օգտագործման և, բնականաբար, ազգային մրցունակության բարձրացման ուղղությամբ: Արդյունավետ գիտատեխնիկական և ինովացիոն քաղաքականությունների իրականացումը Հայաստանի համար, անշուշտ, կստեղծի լայն հնարավորություններ համաշխարհային տնտեսությունում մրցունակ դիրքեր զբաղեցնելու, ինչպես նաև ժամանակակից նորարարական գործունեություն ծավալելու համար: Փորձագիտական գնահատմամբ, բարձր տեխնոլոգիաների ներդրման արդյունքում ՀՀ տնտեսության այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ էներգետիկան, արդյունաբերությունը, ինչպես նաև մեծածախ առևտուրն ու ֆինանսական հատվածը, առաջիկայում հնարավոր կլինի հասնել ծախսերի զգալի կրճատման և տնտեսվարող սուբյեկտների կողմից ստեղծվող հավելյալ արժեքի մեծացման[1]:

Մարդկային պատմությամբ ապացուցված է, որ ցանկացած տնտեսական գործունեության արդյունավետության գործում մեծ է պետության դերը: Վերջինիս կողմից ինստիտուցիոնալ և կարգավորող մեխանիզմների շարունակական կատարելագործումը կարող է ունենալ կարևորագույն դեր տնտեսությունում արդյունավետ ինովացիոն քաղաքականություն իրականացնելու համար: Միջազգային փորձի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտների կողմից ինովացիոն գործունեության խթանման նպատակով պետական կառավարման մարմինները պետք է նպաստավոր պայմաններ ապահովեն ստեղծագործ միջավայրերի ձևավորման և զարգացման, ինչպես նաև «գործարարություն – կրթություն» սերտ համագործակցության ամրապնդման համար: Ռազմավարական արդյունավետ լուծումների գործարկման նպատակով մի շարք համապարփակ նախաձեռնությունների իրականացումն անհրաժեշտ նախապայման է տնտեսական զարգացման նոր մոդելի մշակման համար:

Հետազոտությունների և մշակումների ուղղությամբ ՀՀ բյուջեից 2018 թվականի ծախսումները կազմել են ՀՆԱ-ի 0.13 տոկոսը, ինչը վկայում է այն մասին, որ տնտեսական զարգացման ներկայիս մոդելի շրջանակներում

[1] Հայաստանի ազգային մրցունակության զեկույց, 2017:

Հայաստանում բավարար ներդրումներ չեն հատկացվում նորարարական և տեխնոլոգիական զարգացման ուղղությամբ (տե՛ս Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Հետազոտությունների և մշակումների վրա ՀՀ բյուջեից կատարված ծախսերը (մլն դրամ) 2008 – 2018 թթ. ընթացքում[1]

Հետազոտությունների և մշակումների վրա ՀՀ բյուջեից կատարված ծախսերը (մլն դրամ)	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
	4,474	5,079	5,298	6,066	6,751	6,711	8,285	9,308	8,611	8,981	7,798

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ հանրապետությունում գիտական աշխատողների քանակը ունի նվազման միտում, ինչը պայմանավորված է ոչ բարենպաստ աշխատանքային պայմանների առկայությամբ և ցածր վարձատրությամբ, ընդ որում նկատելի տեմպերով անկում է ապրում հատկապես երիտասարդ գիտական աշխատողների քանակը, մասնավորապես մինչև 30 տարեկան գիտաշխատողների քանակը վերջին 3 տարիների ընթացքում նվազել է ավելի քան 20 տոկոսային կետով (տե՛ս Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Գիտական աշխատողների թվաքանակը (մարդ) ՀՀ-ում ըստ հիմնական տարիքային խմբերի 2015 – 2018 թթ. ընթացքում [2]

	2015	2016	2017	2018
< 30 տարեկան	1,028	1,051	880	785
31 – 39 տարեկան	759	786	745	749
40 – 49 տարեկան	637	598	639	596
50 – 59 տարեկան	977	855	933	775
> 60 տարեկան	1,643	1,591	1,625	1,547

[1] Տվյալների աղբյուր՝ ՀՀ վիճակագրական ծառայություն:

[2] Տես նույն տեղում:

Հայաստանի համախառն ներքին արդյունքի կառուցվածքում ինովացիոն ծախսումների չնչին մասնաբաժնի (0.3 տոկոս) պայմաններում ցանկալի արդյունքների հասնելը գրեթե անհնար է: Այդ առումով առաջատարներ Իսրայելում և Հվ. Կորեայում նշված ցուցանիշի մակարդակը կազմում է համապատասխանաբար 4.3 և 4.2 տոկոս[1]: Այս ամենը վկայում է, որ Հայաստանի տնտեսության զարգացման ներկայիս մոդելը դեռևս չի ընդգծում տեխնոլոգիական և ինովացիոն զարգացման կարևորությունն ազգային տնտեսության մրցունակության բարձրացման և տնտեսական աճի ապահովման համատեքստում:

ՀՀ տնտեսության զարգացման նոր մոդելի ներդրման համատեքստում, որի հիմքում պետք է դրված լինի տնտեսվարող սուբյեկտների մրցունակության բարձրացմանն ուղղված ինովացիոն արդյունավետ քաղաքականության իրականացումը, պետական կառավարման համակարգի կողմից պետք է հետևողականորեն ստեղծվեն գիտելիքահենք տնտեսության զարգացման համար անհրաժեշտ պայմաններ: Ռեսուրսների սահմանափակության և տնտեսության կառուցվածքի արդիականացման անհրաժեշտության պայմաններում խնդրի լուծումը պահանջում է բարեփոխումների ոչ գծային մոտեցում, որի հիմքում պետք է լինի տնտեսական մրցունակության բարձրացման տեսլականը:

Մրցունակությունն, անշուշտ, ենթադրում է արտադրողականության շարունակական կայուն աճ, ընդ որում՝ մրցակիցներից գերազանցող տեմպերով: Տնտեսվարող սուբյեկտների գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ նպատակամետ ինովացիոն քաղաքականության մշակումն ու կենսագործումը հանդիսանում են մրցունակության ապահովման առանցքային գործոններ: Այդպիսի քաղաքականությունը ցանկացած երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գրավականն է, տնտեսության զարգացման հրամայականը: Մրցունակության համաշխարհային զեկույցի համաձայն՝ մրցունակության ցուցանիշով Հայաստանն աշխարհի երկրների շարքում դեռևս գտնվում է միջին դիրքերում: Ուշադրության է արժանի զեկույցի այն դրույթը, ըստ որի կարևորվում է երկրի ինովացիոն զարգացման հնարավորությունը՝ որպես տնտեսության զարգացման շարժիչ ուժ[2]: Այդպիսի գնահատականը խոսում է այն մասին, որ տնտեսության զարգացման և երկրի մրցունակության բարձրացման նոր մոդելի հիմքում պետք է դրված լինի ինովացիոն արդյունավետ քաղաքականության իրականացման տեսլականը՝ տնտեսավարող սուբյեկտների համար հնարավորություն ընձեռելու առաջ անցնել մրցակիցներից, նորարարական լուծումներով թափանցել նոր

[1] The Global Competitiveness Report 2018, World Economic Forum.

[2] Տես նույն տեղում:

շուկաներ՝ համաշխարհային տնտեսությունում գրավելով առաջատար դիրքեր:

Ամփոփելով, հարկ է նշել, որ ՀՀ տնտեսությունն անկախացումից ի վեր կրել է որոշակի փոփոխություններ, սակայն ներկայումս այն կանգնած է լուրջ մարտահրավերների առջև: Համաշխարհային տնտեսության զարգացման ներկայիս փուլում ազգային տնտեսության արդյունավետության բարձրացման անհրաժեշտ նախապայման է հանդիսանում նորագույն տեխնոլոգիաների վրա հիմնված տնտեսության փոխակերպման մոդելի կառուցումը: Ակնհայտ է, որ դրա հիմքում պետք է դրված լինի ինովացիոն արդյունավետ քաղաքականության մշակումն ու հետևողական կիրառումը:

ԻՆՈՎԱՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Ֆլորա Վարդանի Սողոյան
ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի ասպիրանտ

Համառոտագիր

Համաշխարհային տնտեսության զարգացման ներկայիս պայմաններում, երբ սոցիալ-տնտեսական համակարգերի զարգացումը պահանջում է ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործում, ազգային տնտեսությունների մրցունակության բարձրացման և տնտեսական աճի ապահովման հիմնական ուղին կարող է պայմանավորված լինել բացառապես ինովացիոն արդյունավետ քաղաքականությամբ: Ինովացիոն քաղաքականության հայեցակարգի մշակումը, տնտեսության ժամանակակից ուղղությունների ընտրությունը, ազգային տնտեսության մրցակցային առավելությունների օգտագործումը ՀՀ տնտեսության զարգացման ներկայիս մարտահրավերներն են:

Բանալի բառեր՝ նորարարություն, ինովացիոն քաղաքականություն, արդյունավետություն, մրցակցային առավելություն, մրցունակություն, ազգային տնտեսություն:

ИННОВАЦИОННАЯ ПОЛИТИКА КАК ВАЖНЕЙШЕЕ УСЛОВИЕ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Флора Вардановна Согоян
Аспирант Экономического факультета ЕГУ

Аннотация

В современных условиях глобального экономического развития, когда развитие социально-экономических систем требует более эффективного

использования ресурсов, основной путь повышения конкурентоспособности национальных экономик и обеспечения экономического роста может быть обусловлен исключительно эффективной инновационной политикой. Разработка концепции инновационной политики, выбор современных экономических тенденций, использование конкурентных преимуществ национальной экономики являются актуальными вызовами для развития экономики Армении.

Ключевые слова: инновации, инновационная политика, эффективность, конкурентное преимущество, конкурентоспособность, национальная экономика.

INNOVATIVE POLICY AS A MAJOR PRECONDITION FOR ECONOMIC DEVELOPMENT FOR THE REPUBLIC OF ARMENIA

Flora Vardan Soghoyan
YSU Faculty of Economics PhD Student

Abstract

In the current conditions of global economic development, when the development of social-economic systems requires more efficient use of resources, the main path to enhancing the competitiveness of national economies and ensuring economic growth may be conditioned exclusively by effective innovation policy. The development of the concept of innovation policy, the choice of modern economic trends, the use of competitive advantages of the national economy are the current challenges for the development of the Armenian economy.

Keywords: innovation, innovation policy, efficiency, competitive advantage, competitiveness, national economy.